ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մայիսի 2021 թվականի N 723 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N 797-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 797-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) N 1 հավելվածի ամբողջ տեքստում «435» թիվը փոխարինել «437» թվով.

2) N 1 հավելվածի 11-րդ կետում «152,798» թիվը փոխարինել «153,398» թվով, իսկ «533,522» թիվը՝ «535,802» թվով.

3) N 1 հավելվածի 12-րդ կետում «617.0» թիվը փոխարինել «622.0» թվով, իսկ «2020» թիվը՝ «2024» թվով.

4) N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 436-րդ և 437-րդ կետերով.

« 436.	Արագածոտն	Հնաբերդ	Հնաբերդի միջնակարգ դպրոց	մարզային	միջնակարգ դպրոց (1-12-րդ դասարան-ներ)	
437.	Արմավիր	Մրգաշատ	Մրգաշատի Վ. Ափոյանի թիվ 1 միջնակարգ դպրոց	մարզային	միջնակարգ դպրոց (1-12-րդ դասարան-ներ)	».

5) N 3 հավելվածի 13-րդ, 29-րդ, 33-րդ, 38-րդ և 45-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« 13.	ք. Երևանի թիվ 45 հիմնական դպրոց	Էրեբունի	751	
29.	Երանոսի թիվ 2 միջնակարգ դպրոց	ՀՀ Գեղարքունիքի մարզ	236	
33.	Մրգաշատի Վ. Ափոյանի թիվ 1 միջնակարգ դպրոց	ՀՀ Արմավիրի մարզ	322	
38.	Հնաբերդի միջնակարգ դպրոց	ՀՀ Արարատի մարզ	228	
45.	Արագածավանի թիվ 1 միջնակարգ դպրոց	ՀՀ Արագածոտնի մարզ	459	».

6) N 3 հավելվածի «Ընդամենը» տողում «11264» թիվը փոխարինել «11227» թվով, իսկ «Ընդամենը 2-րդ փուլ» տողում «10626» թիվը՝ «10725» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.05.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ